Իսկ Սիւլէյմանն Փաշա՝ որ նստէր 'ի Նաղարէթ, խընդրէր դրամս 'ի վանականաց, և 'ի բաց ասելն սոցա՝ կալաւ 'ի ճանապարհի զուխտաւորս և արկ զնոսա 'ի դանս և 'ի տանջանս՝ կամեցեալ իսպառ մերկացուցանել զնոսա. զի վանականք ձեր ասէ՝ ոչ հասին ինձ 'ի Թիկունս 'ի Նեղութեան իմում. և 'ի պաղատիլն ուխտաւորաց՝ առնու 'ի նոցանէ 13 քսակս եւ արձակէ, եւ սպառնալեօք գրէ յերուսաղէմ առ Հայս եւ առ Յոյնս բովանդակել զայն 150 քսակ. զի եթէ ոչ ասէ՝ չիք հնար անցանել ասել ուխտաւորաց ձերոց։ Եւ նոցա վարանեալ 'ի միտս իւրեանց, խոստացան կատարել զհրաման նորին։ Յետ այնորիկ բռնացեալ Սիւլէյմանայ 'ի վերայ Լատին կղերց՝ պահանջէր 'ի նոցանէ 1000 քսակս դրամոց, և 'ի չառնուլ նոցա յանձն՝ աւարի ետ զվանս նոցա 'ի Նաղարէթ, և մերկացոյց զնա յամենայն գոյից, սպառնացեալ հիմն 'ի վեր տապալել զնա։ Իսկ վանականք մաղապուր փախստեայ զերծան անտի և անկան յերուսաղէմ՝ պատմիչ լինելով անցիցն։ Եւ Թէոդորոս Պատրիարք իւրովքն հանդերձ տագնապէին և տառապէին 'ի նեղութիւնս յայսոսիկ, և հասեալ 'ի չքաւորութիւն յետին յերեսաց կեղէքչաց, դառնացեալ ոգւով դոչէին առ Աստուած և առ աղդն հասանել յօգնութիւն։

Որոյ վասն ժողովեալ միաբանաց և երեւելի ուխտաւորաց տարւոյն գրեցին 'ի Կոստանդինուպոլիս աղերսախառն պաղատանօք անպատճառ վճարել զփոլիցայս Ապու Մէրադի և ազատել զինքեանս 'ի բռնութենէ նորին, զի փակեալ էին ճանապարհք յերկուստէք, և չէր հնար նոցա խոտորիլ յաջ կամ յահեակ (1805. Յունվար)։

Փոլիցայք Ապու Մէրադի դարձան յետս 'ի Կոստանդինուպոլսոյ՝ զի ոչ առին յանձն ազդայինք վճարել զայնչափ գումարս դրամոց։ Մէհէմմէտ Փաշայ լցեալ անհնարին բարկութեամբ ձեռն արկ չարչարել զվանականս Յոպպէի՝ պահանջելով 'ի նոցանէ զգումարս դրամոց 'ի նոյն տեղի, և ուխտաւորք տարւոյն արգիլեալ մնացին յերուսաղէմ. աւաքեաց նա զօրականս և կալաւ զամենայն անցս ճանապարհաց՝ զի զամենեսեան գումարեսցեն 'ի Յոպպէ՝ և արասցէ նոցա ըստ հաճոյից իւրոց, իսկ ուխտաւորք այլ ոչ